

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (6ԳՂԶ045)
ECTS կրեդիտ	2
Դասընթացի պատասխանատու դասախոս	Կրոյան Սամվել գ.գ.թ., դոցենտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել դասընթացի համապատասխան բաժինները, • թվարկել Երկիր մոլորակի, նրա աշխարհագրական թաղանթի բաղադրիչները, • պարզաբանել Երկիր մոլորակի և տիեզերքի միջև կապերը, • բացատրել աշխարհագրական թաղանթը կազմող տարբեր ոլորտների առանձնահատկությունները, կառուցվածքը, յուրաքանչյուր ոլորտում տեղի ունեցող պրոցեսները, • մեկնաբանել աշխարհագրական թաղանթի ծագման, զարգացման և տարածական տարբերակման օրենքները, • մեկնաբանել աշխարհագրական թաղանթի անթրոպոգեն փոփոխությունները, դրանց հետևանքները: <p><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> • մեկնաբանել Երկիր մոլորակի և նրա աշխարհագրական թաղանթի բաղադրիչների միջև գոյություն ունեցող օրինաչափությունները, • վերլուծել աշխարհագրական թաղանթի ոլորտային կառուցվածքը, դրանց միջև գոյություն ունեցող կապերը, • գնահատել երկրագնդի պտույտների աշխարհագրական հետևանքները և դրանց կապը մարդու տնտեսական գործունեության հետ, • մեկնաբանել աշխարհագրական թաղանթի ներքին տարբերությունների պատճառները:

<p>Դասընթացի թեմատիկ ծրագիր</p>	<ul style="list-style-type: none"> • Երկրագիտության ուսումնասիրման օբյեկտը, առարկան, խնդիրները: Երկրակրագիտության ուսումնասիրության մեթոդները: • Տիեզերք հասկացությունը: Տիեզերական մարմիններ: • Երկրի պտույտն իր առանցքի շուրջը: Կորիոլիսի ուժ: Արեգակի շուրջ Երկրի պտույտը և դրա աշխարհագրական հետևանքները: • Մթնոլորտի կազմը, սահմանները, կառուցվածքը, նշանակությունը: Արեգակնային ճառագայթում: Մթնոլորտի ջերմոցային էֆեկտը: • Քարոլորտը որպես աշխարհագրական թաղանթի բաղադրամաս: Քարոլորտ-երկրակեղև փոխադարձ կապը: Պլատֆորմներ և գեոսինկլինալներ: • Ջրոլորտի առաջացումը, բնական ջրերի հատկանիշները: • Կենսոլորտը որպես աշխարհագրական թաղանթի բաղադրամաս: Կենսոլորտը որպես գլոբալ էկոհամակարգ: • Աշխարհագրական թաղանթը որպես կոմպլեքսային բնական գոյացություն : Աշխարհագրական գոտիներ, բնական զոնաներ:
<p>Դասընթացի գրականության ցանկ</p>	<ul style="list-style-type: none"> • Գաբրիելյան Հ.Կ. Երկիր մոլորակը և նրա աշխարհագրական թաղանթը, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, 316 էջ: • Պողոսյան Վ.Խ. Ընդհանուր երկրագիտություն, Գիրք 1, Նահապետ հրատարակչություն, Երևան, 2009, 192 էջ: • Պողոսյան Վ. Խ. Ընդհանուր երկրագիտություն, Գիրք 2, Նահապետ հրատարակչություն, Երևան, 2009, 286 էջ: • Гледко Ю. А. Общее землеведение, Минск, 2005, 207с. • Калесник С. В. Общие географические закономерности Земли, Москва, 1970, 395с. • Неклюкова Н.П. Общее землеведение, Т. 1, 2, Изд-во Просвещение, Москва, 1975, 1976, 336 с. • Шубаев Л.П. Общее землеведение, Москва, 1977, 455 с.

Ամբիոնի աշխատանքները համակարգող՝

Ս. Կրոյան